ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Վարդանյան ՍՊԸ-ն ԷԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/56 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	«Վարդանյան»ՍՊԸ	«Վարդանյան»ՍՊԸ	բժշկական սեղաններ	«Վարդանյան»ՍՊԸ	ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՍԵՂԱՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ 1. Գնման առարկա Լաբորատոր սարքավորումների տեղադրման համար նախատեսված աշխատանքային սեղանների պատրաստում, մատակարարում, հավաքում և տեղադրում: 2. Սեղանների չափերը № Երկարություն Լայնություն Բարձրություն Քանակ 1 3000 մմ 1100 մմ 1000 մմ 1 հատ 2 2500 մմ 1100 մմ 1000 մմ 1 հատ 3 2200 մմ 1100 մմ 1000 մմ 1 հատ Թույլատրելի շեղում չափերից՝ առավելագույնը

						±10 մմ, եթե պատվիրատուի հետ նախապես այլ բան համաձայնեցված չէ: 3. Կոնստրուկցիա Սեղանները պետք է ունենան ամուր մետաղական կրող կարկաս՝ նախատեսված ծանր լաբորատոր սարքավորումների տեղադրման համար: Կարկասը պետք է պատրաստված լինի պողպատե փակ պրոֆիլային խողովակից կամ համարժեք ամրությամբ մետաղական կոնստրուկցիայից: Մետաղական բոլոր մակերեսները պետք է ունենան հակակոռոզիոն պաշտպանություն և փոշեներկված ծածկույթ: Կոնստրուկցիան պետք է ապահովի սեղանի կայունությունը՝ առանց ճոճման, շեղման կամ նշանակալի դեֆորմացիայի: 4. Բեռնատարողություն Յուրաքանչյուր սեղան պետք է նախատեսված լինի առնվազն 400 կգ ընդհանուր հավասարաչափ բաշխված ստատիկ բեռի համար: Աշխատանքային մակերեսը և մետաղական կարկասը պետք է պահպանեն իրենց երկրաչափական ձևը նշված բեռնվածության

						պայմաններում: Սեղանի կոնստրուկցիան պետք է նախատեսված լինի լաբորատոր անալիզատորների և այլ ծանր սարքավորումների երկարատև տեղադրման համար: 5. Աշխատանքային մակերես Սեղանի վերին աշխատանքային մակերեսը պետք է լինի՝ • հարթ և փայլուն կամ կիսափայլուն, • ոչ ծակոտկեն, • խոնավակայուն,• հեշտ մաքրվող և ախտահանվող, • դիմացկուն բժշկական և լաբորատոր պայմաններում կիրառվող մաքրող և ախտահանող նյութերի նկատմամբ, • դիմացկուն առնվազն 70% էթիլային կամ իզոպրոպիլ սպիրտով բազմակի մաքրման նկատմամբ, • չպետք է գունափոխվի, ուռչի, շերտազատվի կամ կորցնի մակերեսի ամբողջականությունը սպիրտային ախտահանիչների կիրառման արդյունքում: Մակերեսը պետք է լինի առանց բաց ծակոտիների, ճեղքերի և դժվար մաքրվող հատվածների: Աշխատանքային մակերեսի եզրերը պետք է լինեն մշակված և պաշտպանված խոնավության

						ներթափանցումից: Նախընտրելի է օգտագործել լաբորատոր կիրառման համար նախատեսված Compact HPL, քիմիակայուն HPL կամ տեխնիկական պահանջներին համապատասխան համարժեք նյութ: 6. Պահարանային հատված Յուրաքանչյուր սեղանի ստորին հատվածում պետք է նախատեսվեն պահարաններ: Պահարանները պետք է ունենան բացվող՝ ծխնիներով դռներ: Դռները պետք է՝ • բացվեն և փակվեն սահուն, • ունենան ամուր կահույքային ծխնիներ, • ապահովեն պահարանի պարունակության ազատ հասանելիությունը, • ունենան հարմար բռնակներ, • դիմակայեն բազմակի բացման և փակման պայմաններին: Պահարանների ներքին մակերեսները պետք է լինեն հարթ, խոնավակայուն և հեշտ մաքրվող: Պահարանների ներսում անհրաժեշտության դեպքում պետք է նախատեսվեն դարակներ: 7. Կայունություն և ոտքեր Սեղանները պետք է ունենան ամուր հենարաններ: Ցանկալի է նախատեսել բարձրությամբ

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Варданян в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷՔԿ-ԷԱՃԱ ՊՁԲ-26/56 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
3					

կարգավորվող ոտքեր, որոնք հնարավորություն կտան կոմպենսացնել հատակի անհարթությունները և ապահովել աշխատանքային մակերեսի հորիզոնական դիրքը: Ոտքերի ստորին հատվածը չպետք է վնասի հատակի ծածկույթը: 8. Անվտանգության պահանջներ Կոնստրուկցիայի բոլոր մետաղական եզրերը և անկյունները պետք է լինեն մշակված և անվտանգ օգտագործման համար: Չպետք է լինեն բաց սուր եզրեր, մետաղական ելուստներ կամ այլ հատվածներ, որոնք կարող են վնասվածքի պատճառ դառնալ: Սեղանի աշխատանքային մակերեսը պետք է ապահով կերպով ամրացված լինի մետաղական կարկասին:9. Գույն և արտաքին տեսք Աշխատանքային մակերեսի և պահարանների վերջնական գույնը համաձայնեցվում է պատվիրատուի հետ մինչև արտադրությունը: Սեղանների արտաքին մակերեսները պետք է ունենան միատեսակ գույն և ավարտված տեսք: Բոլոր երեք սեղանները պետք է պատրաստված

					լինեն նույն ոճով, նյութերով և գունային լուծմամբ: 10. Մատակարարում և տեղադրում Մատակարարը պարտավոր է իրականացնել՝ • սեղանների պատրաստումը, • տեղափոխումը պատվիրատուի տարածք, • ներբեռնումը և տեղափոխումը նախատեսված սենյակ, • ամբողջական հավաքումը, • տեղադրումը, • հորիզոնական դիրքի կարգավորումը, • վերջնական ամրացումները և շահագործման պատրաստ վիճակում հանձնումը: Տեղադրումից հետո սեղանները պետք է լինեն կայուն և պատրաստ լաբորատոր սարքավորումների տեղադրման համար: 11. Երաշխիք Սեղանների, մետաղական կարկասի, աշխատանքային մակերեսի, պահարանների, դռների, ծխնիների և այլ բաղադրիչների համար տրամադրվող երաշխիքը պետք է լինի առնվազն 24 ամիս՝ ընդունման-հանձնման օրվանից սկսած